



ցին, երբ այդ յոգևածը լոյս տեսաւ «Русское Дело»-ի մէջ:

Երկուսից մէկը. կամ պ. Շավրով ինքը չէ հասկացել իր գրածները նշանակութիւնը և չէ դատարար թէ ինչ հետեանք կարող են ունենալ նորա, և կամ գրել է դիմամբ և նպատակով...

Թէ առաջին և թէ վերջին դէպքումն էլ նա մեղաւոր է, և ժամանակ է այդպիսի մարդոց հասկանալու, որ այդ տեսակ գործունէութիւնը մասնաւոր լրագրական ասպարէզում արժանի է խորին արհամարհանքի...

ՆԱՄԱԿ ՊԵՏԱԳՈՐԱԿՈՅԻՆ

Օգոստոսի 16-ին

Կանոնաւոր եկեղեցի ունենալուց յետոյ, կրօնի և ուսման համար իր վերջին կողմէն չը խնայող Պիատիգորսկի ժողովուրդը մտածեց ուսումնարան ևս ունենալ, որի միջոցով այս հեռու օտարութեան մէջ ապագայ սերունդը դարձանար, որի զընկաւոր դարկ տուողը տեղիս երկտասարդ քահանան էր՝ Ներսիսեան զպանոցն աւարտած, որ իր յաճախակի և ազդու քարոզներով ժողովրդին պատրաստեց այդպիսի բարենպաստակ գործի համար վերջին կողմէն չը խնայելու: Եւ անհաճեալ տարի, երբ թեմիս առաջնորդ, գերապատիւ Սուրենեանց, այստեղ էր՝ ժողովուրդը մի խնդրազրով դիմեց սրբազանին և Պիատիգորսկում արական ծխական դպրոց բանալու: Իրաւունք խնդրեց, որը և ստացաւ առաջին 1888—1889 թուականի ուսումնական տարում բանալու պայմանով: Իսկոյն և եթէ համախոսական ժողով կայացաւ և դպրոցի համար հետեւեալ անձինքը՝ պ. պ. Բաղդասար Խաչատրեանց, Ղազարոս Սէլէշիկեան, Գէորգ Մանդակեանց, Ղաւրիթ Գիւրգենեան, Խաչատուր Թամանեանց (այժմ հանգուցեալ) և Գովհաննէս Բաբայանեան՝ հոգաբարձու ընտրվեցան: Ուրեմն ուսման գործի ղեկավարներն այս գործին նախանձախնդիր անձինք ընտրվեցան, որոնք ամենայն ջանք գործ են դնում դպրոցի գոյութիւնը յարատեւելու:

Բայց անհաճեալով ուսումնական տարին, մինչդեռ հոգաբարձուները պատրաստվում էին տղայաց դպրոցը բանալու, ժողովուրդը ցանկութիւն յայտնեց տղայաց դպրոցի հետ և անօրինակ դպրոցի հետեւեալով, խոտաւանալով նրա գոյութիւնը ևս ապահովել: Ժողով կայացաւ և երկուսու դպրոցների ելմանց ցուցակ կազմելուց յետոյ, երեւցաւ, որ կարելի է և աղջկանց դպրոց բանալ, իսկոյն այդ ելմանց ցուցակը մի առանձին խնդրագրով գերապատիւ առաջնորդին ուղարկվեց նոր ծրագրված դպրոցների համար թույլտուութիւն խնդրելու, որի բարեկամ ինքն անհամբար սպասում են. թէ ժողովուրդը և թէ հոգաբարձուները երկուսու դպրոցների համար ամենայն պատրաստութիւն արդէն վաղորօք տեսել են:

Ամենեւեմ որոշեցին և այդպէս հոգաբարձուները: Չորրորդ՝ նուէրը ի պատկանատեան, որոց սահմանադրութեան պայման չէր բացատրեալ ոչ ի նախաւոր յառաջարկութիւնս կոնսիստորիային և ոչ իսկ Հոգաբարձուաց ուսումնարանի, եւթադասեալ իբրեւ ծանրութիւն իմն հոգեւոր հարկի ժողովրդեան և հետեւեալ յարուցել տրանջանաց: Հինգերորդ՝ նուէրը ի մասնադասն ի հոգեւորականութիւն կամ ի ձեռնադրելուց ի քահանայ, ըստ տարապայման անհամաձայնութեան կանոնական սահմանաց եկեղեցւոյ Հայոց և նոյն իսկ հոգեւոր նշանակութեան ծանեալ անվայել և հակառակ բարոյական սկզբանց կանոնին: Վեցերորդ՝ և եօթներորդ՝ սրբազան անուանեալ արդիւնք ըստ անբացայայտ մեկնութեան պայմանաց սահմանադրութեան նոյնին, մնային ընդ կարծիքական եւթադասութեամբ իբրեւ ծնունդի անբարոյականութեանց, յորոց պահանջին հասանէր զայն:

Արդ ընկալեալ զդրաւոր բացայայտական բանս ի բարեպաշտ հասարակութենէ Շուշի քաղաքի և զհաւատարմի հաւատարմի առ այս հաւատարմացեալոց ի Ձեռք Ազնուական Խաչի բէկի Գօլուխանեանց, Պոզգորուշի Գառապար բէկի Գառապարեանց, Գօհաննէս բէկի Բահաթուրեանց, Պարոն Գօհաննէս Դիմիւսեան և Պարոն Պետրոսի Աղամալեանց մէջ համախորհուրդ հաճութեամբ Արքայան Անուգական Անդամոյն և Ներազմին հետամտութեամբ ամենայն պարագայից առաջարկութեանց Զերոյ՝ բարեւոք դատեցաւ ի կատարումն Ազգա-

Գաղութները բացի ժողովուրդից հաւաքած մօտ 500 բուրլի տարեկան պարտաւորեալ տուրքից, ունեն և երեք հազար (3000) բուրլի դրամագլուխ, որը կտակել է յիշեալ դպրոցների հոգաբարձու, նորահալընանցի հանգուցեալ Խաչատուր Թամանեանց, որը չը բաւականանալով իր կենդանութեան ժամանակ արած բարեգործութիւններով, կամեցաւ և մահվանից յետոյ իր յիշատակը մի գովելի գործով անմահացնել հայ սրտեւորում և ճշմարիտ, գոնէ Պիատիգորսկի հայ ժողովուրդը չի մոռանալ իր բարերարին:

Չը պէտք է մոռանալ և նրանց, որոնք ամառները բժշկվելու նպատակով տեղս գալով մեծ օգուտներ են տալիս թէ եկեղեցուն և թէ ուսումնարանին: Այդպիսիներէն էլ յայտնում ենք մեր խորին չնորհակալութիւնը:

ՆԱՄԱԿ ՆՈՒՈՒՅԻ

Օգոստոսի 16-ին

Յուլիսը և օգոստոսը մի տեսակ տօնաժամանակ ամիսներ են Նոբուս: Պարսկաստանից, Թիֆլիսից, և Անդրկովկասեան համարեա ամեն քաղաքներից բաւական թուով արեւելեան դերձակներ, իւրաքանչիւր տարեկան այս ժամանակ հաւաքվում են այստեղ լեզու չալ աւելու: Դա լեզվիների տնային ամենազգաւոր արդիւնաբերութիւնն է, որը նրանք խմբով տարվալ այդ որոշ ամիսներում բերում են իրանց գիւղերից Նոբուս վաճառելու: և ամեն տարի այդ ապրանքից արտահանվում է այստեղից աւելի քան մի միլիոն բուրլու: Այդ շալը իր չափից դուրս արժանութեամբ և զինակցականութեամբ նշանաւոր տեղ է բռնում մեր արեւելեան հասարակ դասակարգի անտեսական կենցեղում: Թիֆլիսի և հայերի միջին և հասարակ դասակարգը քաղաքներում և գիւղացիների մեծ մասը իրանց վերին հագուստների համար բացառապէս այդ շալերն են գործածում:

Բաւական հետաքրքիր ժողովուրդ են այդ լեզվիները. ես երբեք մօտիկ յարաբերութիւն չեմ ունեցել այդ մարդկանց հետ, բայց Նոբուս այդ տօնաժամանակ սկսելուց յետոյ ես երբեմն գնացել եմ նրանց մօտ և հետաքրքրվել զրանց առեւտրով: Առաջին անգամ մօտեցումս արեւմտեան, ես չը կարողացայ ծիծաղել զայն: Մեր կողմերի այդ բոլորովին վայրենի ժողովուրդը իր տօնաժամանակ համար այնպիսի որոշ պէս կոչու ու կոչու տեղ էր բռնել, որը անկարելի է տեսնել ու չը ծիծաղել: Դա մի հին և կիսաւեր քարվանսարայի այգիէս ասած «չարխան» է, կտորի վրայի փայտէ ծածկով: Այդ ծածկի տակ լեզվի դարսում է հազարաւոր հակերով այդ շալերից, նրա տակ աղւորում է նա ամբողջ ամիսներ, ուսում է, ընում է և ծախում է այդտեղ իր ապրանքները: Բաւական քաջ և անվայել մարդիկ են լեզվիները, բայց սաստիկ միամիտ և

չաճ ձեռնարկութեանց Զերոյ, թողու վերստին զկարճեալ արդիւնս յօդուտ դպրոցին բացառութեամբ յերկից աղբեր, այն է՝ նուիրանաց, եւթադասեալը ի քահանայադասաց ըստ վերոյգրեալ անհամաձայնութեան կանոնական կարգին եկեղեցւոյ մերոյ սրբոյ և և կողմէկադրամոց ի ուժկաց պաշտօնատարաց կոնսիստորիային և, նուիրանաց յանուտ աղբատիկ որոց և այլեաց ժողովուրդ: Իսկ զառարկայն տնօրէնութեան արդեանց կալուածոց վանօրէիցն թեմիդ և եղանակի կառավարութեան նոյնին, նոյնպէս և զընտրութիւն և զհաստատութիւն կանոնաց՝ սահմանելուց վասն ուսումնարանին, յանձնեցաւ ի տնօրէնութիւն Անուգին:

Մնայ Զեղ միաւորել զիոյթ և զհոգատարութիւն Զեր զպահպանութենէ վանօրէից վիճակին Ղարաբաղու՝ զպաշտպանութենէ կալուածոց նոյն յերեսաց անխաւ տիրապետութեանց օտարաց և զբարգաւաճութենէ արդեանց նոյնին, զի այնու վերածեալ զնոստ և չըբեղ և ի շէն դրութիւն և ուսումնարանն մատակարարեացի արովը նոյնս:

Զիւր տարակոյս զի այս օրինակ միաշունչ և սիրաշաղկապ նկրտումն Զեր ի մի նպատակ առաքինական գործոյն, ծնանուց է զընդարեւեալ արդարեւ բարութեան և յայնժամ մանկիւր Հայաստանից լուսաւորեալը մտօք և հոգով, որ ի սուրբ պաշտօնս հոգեւորն սպասաւորութեան Տօնարին Աստուծոյ, որ ի քաղաքական բարեկրթութեան և որ յազգի ազգի գիտութիւնս և պաշտօն-

խաբուրդ, մանաւանդ առեւտրի մէջ: Օգուտ քաղելով այդ միամտութիւնից զնորների մեծ մասը, առեւտուրը սկսելուց յետոյ սկսում են մի շարք շողորթութիւններ լեզու անձնասիրութեան «իդիլութեան» համար. երկար ու լարակ կեղծաւորութիւններ են անում մինչև աղւորում է նրանց իրանց ցանկացած գնով ձեռք բերել լեզվից ապրանքը:

Աւելի հետաքրքիր է երբ լեզվիները ծախում են իրանց ձեռները: Այդպիսի ձեռներ 2—3 հազար ծախվում են այս ամիսներում. դրա համար կան որոշված հրապարակներ Չորս, հինգ մարթիթները իրանց համար արհեստ են չինել ձեռք դալալութիւնը՝ իւրաքանչիւր ծախած ձեռք ծախողից և գնողից 2 բուրլի ստանալով: Բայց համարեա միշտ աւելորդ վարձատրութիւններ են ստանում նրանք և պէտք է ակամատես լինել թէ ինչ օյններ են խաղում նրանք, լեզու գիլին: Այդ մարդիկ չափից դուրս լեզուներ են, ճարակի և անամօթ: Բաւական է լեզվին ձին հրապարակը բերեց. հաւաքվում են զիսին լեզվին գնահատում է ձին օրինակ 60 բուրլի: Դալալը առաջարկում է դիցուք 35 բուրլի և լեզու ձեռքը գնում է գնողի ձեռքի մէջ ու ինքը ամուր բընելով «Ալլա ինչը վերստին» ասում է: Լեզվին չէ համաձայնութեան Դալալը սկսում է նրան համբուրել՝ երեսից, ճակատից, սկսում է նրան ամենից քաղցր խօսքերով շողորթել, երգել սրբերի անուններով, և այլն: Լեզվին պակսեցնում է գնից մի բան. բայց դալալը նրա ձեռքը բաց չէ թողնում, կրկին առաջարկում է իր «Ալլա ինչը վերստին» ասած և սկսում է լեզու ձեռքը ամբողջ թեքից թափահարել: Միւս դալալները սեղմում են կտից, նեղացնում են լեզու «վերստին», վերստին բղաւկով չորս կողմից. և ողորմելուն շատ անգամ այնքան նեղացնում են, որ մասամբ ամպելուց, մասամբ թեքից ցաւից (այնպէս ոյժով թափահարում են), «վերստին» է ասում և համաձայնվում է:

Բայց շալից և ձեռներից այդ տօնաժամանակում լեզվիները ծախում են մեծ քանակութեամբ «եւփնջներ», սերբ, և ուրիշ մի քանի այդպիսի ապրանքներ: Ամբողջ առեւտուրը կանխիկ է լինում:

ԱՅ. ԱՅ.

ՆԱՄԱԿ ԽՈՒՈՒՅԻ

Բազու, 25 օգոստոսի Պ. խմբագիր, խնդրեմ զետեղէք ձեր պատուական լրագրում հետեւեալ տողերս:

Արդեն մի քանի ժամանակ է, որ օրէնք է դուրս եկած, որի զօրութեամբ հեռադրատներում չեն ընդունում այն անձանց, որոնք չունեն բոլոր հարկաւոր վկայականները, որոնց թուում և արձակման վկայականն է, եթէ ընդունվող անձնատորին հասարակութեան դասակարգիցն է: Ես պատկանելով վերջին դասակարգին և չունենալով արձակման թույլ՝ հասարակութիւնից, անցեալ

նրա՝ հանդիսացին փառք ի պարճանս Ազգի և այնու անմահացուցին ի յիշատակ իւրեանց և ապագայ սերունդան զՁեզ՝ զնախանձախնդիր պատճառաւ անմահ և անջնջելի բարութեան:

Այս ուրեմն զուգուրեալով, որ է մայր բարեաց ի մի յօդ բարոյական ի մի փոյթեանադն աղքատիւական հոգի յառաջ տարէք զայդ ձեռնարկ գովանի, ի կատար հանէք զդա, թող ծաղկեցի ուսումնարանն, թող փթիթեցի երեսիս Զեր, որովք Հայրենի եկեղեցւոյն թող ի մատաղ չըթուան նոցա օրհնեցին անուն Զեր ի խորին զգացմունս երախտադիտութեան և Գուր պատկեանքը աւետարանական երանութեամբ յերջանիկ փառս անմահից:

Եւ մեր յանձն առնելով զՁեզ ի խնամս Ամենակարողին Աստուծոյ, և հայցելով Ձեզ զօրհնակութիւն չնորհաց նորա ի յաջողութիւն առաքինական գործոյ մնամք վասն ազգին կենաց և բարօրութեան Զերոյ:

Ի վերայ իսկական ստորագրեալ է աղօթաբար Մատթէոս Կաթողիկոս ամենայն հայոց:

Համար 153.

1861 ամի. Դ 15 ապրիլի. ի սր. Էջմիածին: Այդ կօղակի զօրութեամբ Անուր յանձնում է Հոգաբարձութեան և սա ընդունում է վանքական վերոյիշեալ 200,000 դոնստոն կալուածները հետեւեալ պայմաններով:

1) Շուշու ժողովուրդը պէտք է երկու կամ երեք բարեկոյս անձինք նշանակէ վանօրէից վանահայրերի յօդակալութիւն ի պատասխանութիւն

ամիսները մի քանի անգամ անմիջապէս նամակով խնդրեցի Չովդաուի հասարակութեանը (Նիւստաւտայօլ գաւառի), տալ ինձ արձակման թույլ, որով ևս կարողանամ ընդունվել հասարակութեան վարչութիւնը ստիպում է ունենալ անպատճառ այդ վկայականը, հակառակ դէպքում ես սխալ գրկվեմ ծառայութիւնից, իսկ իմ յարգելի համադիւղացիներս համար բոլոր իմ խնդիրներս առանց ուշադրութեան են մնում: Գուր, զիմում եմ Նիւստաւտայօլի գաւառապետին երկու անգամ, և բանից երկու է, որ դաւառապետն առաջարկում է, բայց չովդաուցիք մերժում են տալ ինձ վկայական:

Ես, ինչպէս բուն չովդաուցի, կենալով շատ մասը Չովդաու գիւղում անցկացրած, ուղիղ գիտեմ, ու չէ սրա պատճառը: Մեր գիւղում կան մի քանի անձինք, որոնց ձեռքին է ամբողջ հասարակութեան զեկը: Պէտք է չը մոռանալ, որ Չովդաու գիւղը 100 ծխից է բաղկացած: Այդ հերոսները, որոնց ձեռքից է կախված ամբողջ ժողովրդի վիճակը, իրանց զեկակարութեան ընթացքում, ոչ թէ միայն բոլորովին անօգուտ են եղել հասարակութեան համար, այլ և զրգելով մի և նոյն ժամանակ փողերը մեծ տոկոսով չափով տալով, տոկոսը մէկին երկու գրելով, և այլ այդ տեսակ անվայել գործերով պարագելով, որոնց ինքս եղել եմ ակնատես, աւելի թուլացրել են աղքատ դասակարգը նիւթապէս: Տղիւտութիւնը չովդաուցիները մօտ վերին աստիճանի է հասնում. ամբողջ 100 ծխից միայն երկու գրադէտ կայ հայրենի, որոնք ըստ մեծի մասին տանը չեն գտնվում, վասն որոյ շատ անգամ գիւղացիք մի որ և իցէ հրաման կամ հարկաւոր թույլ ստանալով, չեն իմանում ում դիմեն, որպէս զի կարգացնեն: Ես այս երկու գրադէտներ հաշուում չեմ յիշում Չովդաուի քահանային, որովհետեւ նրա համար պէտք է միշտ տպած գիր լինի, որ նա մի փողը աղատ կարողանայ կարգալ, իսկ ձեռագիրը նա գեւ. եւ չէ սովորել կարգալ:

Այս խօսքերը թող ընթերցողը չը վերաբերէ կրքի զգացմունքին: Ես զուտ ճշմարտութիւն եմ յայտնում թող միայն Գանձակի հոգաբարձականութիւնը ուշը դարձնէ լուսաւորելու մտք չովդաուցիներին, յորոցէ նրանց ունենալ գէթ մի փողիկ ուսումնարան, որտեղ գոնէ հայերէն սովորէին մանուկները: Տղային տիրացու պ. Ոսկանեանց կարող է այդ պաշտօնը կատարել և շատ յարմար է գիւղացիներին, համեմատ իրանց կողմից տրվել չնչին վարձատրութեան: Այդ պարոնը անցեալ տարի մեծ եռանդով սկսեց ուսուցանել մեր մանուկներին, բայց մինչև այժմ դասավարձի մէջ մասը չէ ստացել դեռ ևս:

Լ. Վանիսեանց

Իրաւանց և ի ծիղ հաշուակալութիւն:

2) Կալուածների արդիւնքից նախ պէտք է հոգաւորին վանքական կառավարութեանց կարեւոր պէտքերը:

3) Պէտք է հոգացուին վանքերի շինութիւնը և նորոգութիւնը:

4) Պէտք է պահպան վանքերում վանական զըպրոցներ:

5) Ապա միայն աւելացեալ արդիւնքը դարձնեն զպրանոցի օգուտն:

Ուրեմն «Մատթէոսեան» զպրանոցի հաստատութեան համար Էջմիածինը տալիս է վանքական բոլոր կալուածների աւելացեալ արդիւնքը, յանձնելով այդ կալուածների կառավարութիւնը Հոգաբարձութեան և բացի դրանից՝ վիճակային 11 եկամտի աղբիւր, իսկ Շուշու ժողովուրդը տալիս է միանուագ դրամագլուխ 15,000 բուրլի, և տարեկան 2,400 բուրլի: Այդ լինում է 1861 թ. ապրիլի 15-ին. այդ օրից սկսած Հոգաբարձութիւնը անխալտան օգուտ է քաղում այդ բոլոր եկամտանիցից, կալուածներից: Այդ օրից անցել է ձիւղ 27 տարի: Տեսնե՛ք կատարել է նա նոյնպէս ճշգրտեալ իր խոստանները և յանձն առած պարտաւորութիւնները, թէ ոչ: Մնանով անա վերջացնում ենք մեր տեղեկագրի առաջին մասը:

Հ. Առաքելեան



մայր եկեղեցին դնալու ժամանակ, մանուկները երգում էին ազգային հիմնը և ճանապարհի վրա սիրում էին ծաղիկներ, իսկ մայր եկեղեցում Նոյա Մեծութիւններին դիմաւորեց խնայողի արքայականութիւնը, որը չնորհաւորական մի ճառ արտասանեց: Մարտի 26-ը յետոյ ճաշ էր պատրաստված պալատում, որը կառուցված է եղել Նիկողայոս I կայսրի թագաւորութեան ժամանակ: Փառաքել լուսաւորված էր, պալատի դիմաց վառվում էր մի առաջին վահան փակագործ և մակագործութեամբ: Շարաքի օր Նոյա Մեծութիւնները, թագաւորականը և Մեծ խնայողի Ս. Երեմիայի անուանումը 8 ժամին դնացին զօրախաղերը տեսնելու, որոնց նայում էին բլրակից և 10 ժ. 55 րոպէին վերադարձան պալատը նախաճաշելու համար, որից յետոյ տեղի ունեցաւ աշխատանքներ, դեմտօյի և պատգամաւորութիւնների ընդունելութիւնը: Այսպէս Նոյա Մեծութիւնները բարեհաճեցին այցելել ապաստարանը և գիմնասիան, ուր հաւաքված էին գիմնասիան, բնագիտական ուսումնարանի, մանուկ դիմաւորի աշակերտները և իգական գիմնասիան աշակերտութիւնները, իսկ գիմնասիան այդպիսով ժողոված էին ժողովրդական ուսումնարանների աշակերտները: Նոյա Մեծութիւնները բարեհաճեցին այցելել կրկին պետական ձիապահութեան ախոռները և գիմնասիան հեռանդանոցը:

Ս. ՊԵՏԵՐՈՎՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Օգոստոսի 26-ին

|                                     |                 |
|-------------------------------------|-----------------|
| Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ. . . . .  | 98 ր. —         |
| Համբուրգի վրա 100 մարկ — . . . . .  | 48 > 10         |
| Համբուրգի վրա 100 ֆրանկ — . . . . . | 38 > 70         |
| Ռաբի — արծէ. . . . .                | 7 > 87          |
| Մադրասի կուպոններ — . . . . .       | 157 > 50        |
| Արծաթ — . . . . .                   | 1 > 23          |
| Բորսային դիվիդենդներ — . . . . .    | 6 1/2 և 7 1/2 % |

|                                                  |          |
|--------------------------------------------------|----------|
| Պետական 5% տոմս 1-ին շրջանի . . . . .            | 98 > 50  |
| — — — — — 2-րդ — . . . . .                       | 97 > 12  |
| — — — — — 3-րդ — . . . . .                       | 97 > 25  |
| — — — — — 4-րդ — . . . . .                       | 97 > 12  |
| — — — — — 5-րդ — . . . . .                       | 97 > 25  |
| — — — — — 6-րդ — . . . . .                       | — > —    |
| Նոր 4% փոխառութիւն . . . . .                     | 81 > 12  |
| Արեւելեան 5% փոխառութիւն 1-ին շրջ. . . . .       | 96 > 50  |
| — — — — — 2-րդ — . . . . .                       | 96 > 62  |
| — — — — — 3-րդ — . . . . .                       | 96 > 75  |
| Ներքին 5% առաջին փոխառութիւն . . . . .           | 265 > —  |
| — — — — — երկրորդ — . . . . .                    | 247 > —  |
| 5 1/2 % Բէնտա . . . . .                          | 101 > —  |
| Ռուսիայի Բէնտա . . . . .                         | 174 > 25 |
| Եթովպիայի կոնսոլիդացիոն փոխառութիւն . . . . .    | 147 > —  |
| Նոր երկաթուղային Բէնտա . . . . .                 | 96 > 87  |
| 5% զբոսական թղթեր կալուած. . . . .               | — > —    |
| — — — — — Կրեդ. Ընկ. մտ. . . . .                 | 150 > —  |
| — — — — — Թղթագ. . . . .                         | 91 > 75  |
| Գրաւ. Թղ. Ալեք. Բանկի . . . . .                  | 97 > 50  |
| 5 1/2 % զբոսական թղթեր խնայողի . . . . .         | 97 > 50  |
| — — — — — Կալուած Բանկի . . . . .                | 101 > 37 |
| 6% զբոսական Թղ. Նորօգի կալ. Բան. . . . .         | 100 > 50 |
| — — — — — Պոլսական — . . . . .                   | 100 > 75 |
| — — — — — Կիւնի — . . . . .                      | 101 > 25 |
| — — — — — Մոսկովսկի — . . . . .                  | 101 > 25 |
| — — — — — Բեսարաբ. Տար. — . . . .                | 100 > 25 |
| — — — — — Նիսի. Սամար. — . . . .                 | 101 > —  |
| — — — — — Վիլնայի — . . . . .                    | 100 > 75 |
| — — — — — Թիֆլիսի — 2 1/4 և 4 3/4 տ. 98 —        | — > —    |
| — — — — — Գոթլանդի — 1 1/8 և 4 3/4 տ. 98 —       | — > —    |
| Վ. Օլտիս-Կամիսի Բանկի ակցիաները 670 —            | — > —    |
| Ռուսաց Երկաթուղիների գլխաւ. Ընկ. 245 —           | — > —    |
| Ռիբինսկ-Բոլոգոյի Ընկ. . . . .                    | 81 > 75  |
| Ս. Պետերբուրգի քաղաքային օրվ. գաղտնիք. . . . .   | 93 > 87  |
| Մոսկովսկի քաղաք. օրվ. գաղտնիք. . . . .           | 93 > 50  |
| Օդէսայի — . . . . .                              | 93 > 50  |
| Թիֆլիսի քաղաք. կրեդ. Ընկ. օրվ. . . . .           | 83 > —   |
| Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը հանդարտ է: | — > —    |

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԿՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

### ԳՈՐԾԱՌԹԻՒՆ ՄԻՄԻԱՅՆ

#### ԿԵՕԼԵՐԵԱՆ ԻԿՂԻ ԵՒ ՓՈՇԻԻ

ամեն տեսակ տնային ամանեղէններ խոտակերտ համար (խնկէս՝ սամովարներ, կողպէքներ և այլն) տալիս է կատարելագոյն փայլուն և աւելի լաւ հետեւանքներ, քան թէ բոլոր մնացած սոցիալական միջոցները:

Ծախվում են դաւաճանքներով բոլոր նշանաւոր վաճառականների մօտ. Մոսկովում Բ. Կեօլերի և Ընկ. մօտ, Նիկոլայա փողոցում:

№ 7. II. K. O. (1—3)

### ԱՌԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

#### ԵՐԹՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ա տ տ ե ս տ ա տ ն եր:

Աւանդելի առարկայք սուք են 1) Առևտրական հետեւութիւն, 2) Առևտրական թուղթաւորութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուղթաւորութիւն համարներ վրա, 5) Առևտրական թղթաւորութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն, 7) զեղադրութիւն:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 25-ից: Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոյուզկում, Լաբորատորիայ փողոցի վրա, № 11: Իսկ օգոստոսի 20-ից Աղէքսանդր Փրիգոնովի տանը, № 9 Սերգիեյևսկայա և Նազարնայա փողոցների անկիւնում, զեղադրական գիմնաց, ուր անցնելու են կուրսերը: Ծրագրերը ու կանոնները կարելի է ստանալ ԶԻՐԱՊԵՍ եղբ. Ծովանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբանաբար զինվում են կուրսերի հիմնողին.— ВЪ ТИФЛИСѢ, С. П. МАНУЭЛЬЯНЦУ.

10—20 (Ե. Շ.)

### Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ե Ր

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ պատրաստ է 500 րուբլի տարեկան ուժեղիով ծառայել մեր դպրոցներում, շարաքական 26—30 դասեր յանձն առնելով՝ երկդասեան դպրոցում ուսուցիչ լեզուով աւանդելի առարկաներից, իսկ միգրանտ դպրոցում նաև թուրքական լեզուից: Պէտք է ունենայ սենեակ, ծառայ, վառելիք և ճանապարհածախս:

Հասցէի մասին հարցնել «ՄՇԱԿ» խմբագրատանը: 2—5

---

### ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ ԵՐԿՐԱՍԵԱՆ ԵՐԿՍԵՆ ՈՒՍՈՒՑ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԼԵՁՈՒԻ, մի ուսուցիչ ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ և ձայնագրութեան և մի ուսուցչուհի ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ:

Պայմանների մասին դիմել հոգաբարձութեանը: 5—5 (Ե. Շ.)

---

### ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Փարիզեան դերձակութիւն, ձերմակեղէնի կարելը և եւրօպական ձևով խոտակեր ԴԵՅԱՐԻՍԵՆՈՎԻ, Միլայէլեան փողոցի վրա, տուն Մանթաշէլի, № 53, Թիֆլիսում:

Ընդունվում են պատուէրներ քաղաքական և գիմնասիական համալսարանների, մօդային դեզանների, ձերմակեղէնի, հաշուաւորների, նշանների, կանանց ժակէտների, կօրսէտների և նրանց վերանորոգութեան: Մաքրվում են զգեստներ, տիւլի և կրօնական վարդապետների մեքենական և քիմիական միջոցով, նոյնպէս կուսքը և անվում շոգիով: Բոլոր պատուէրները կատարվում են արագ և կատարեալ կերպով: Վարդապետները մաքրվում են մի օրում և խղճմամբ: Նոյնպէս կարկատում են վարդապետները անվարձ և անմիջապէս կատարում են պ.պ. օտարաբանաբարների պատուէրներ: Նոյն տեղ օրինակելի կար ու ձևի դասատուութիւն է լինում, 75 րուբլի վաճառվում ամբողջ կուրսի համար, որտեղ ուսում է աւարտել ԵՓԻՄ ԵՓԻՄԵԱՆՑ, որը բաց է արել Բագուի մէջ:

1—2

### ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄԻՐԱՅԻՆ ԵՒ ԳԱՋԱՅԻՆ ԶՐԵՐԻ

## Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

### ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Ցերիօնայա փողոցում, կօնստանտինովի տան կից, որտեղ զետեղվում է Լօրէօ և Ընկ. տպարանը)

Պատու ունեւ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վեր ա նորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանն, աշխատելով բաւականացնել ժԱՄԱՆԱԿԱՆԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՀԱՆԱՅԻՆԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ:

Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՅԻՍԵԻ մի ՊՐՈՎԻԶՈՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենանոր ձևի մեքենաներ, նոյնպէս և ԶԻՎԻՆԻ հաշուաւոր ՖԻԼՏՐԻ, որը միակ է, որ աշոգութեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրդանական, միներալական մասնիկներից ու աղբից և դերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:

Պրօվիզորը մշտապէս դանդաղ է և անձամբ պարապում է իմ գործարանում: Զնորոկ այն օժտանալի միջոցների, որ տալիս է գիտութիւնը անախտական քիմիայի ճիշդում, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, բացի զէպէրեան, մրդային և զաղային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԿԱՆ ԲՈՒՆԵՐԱԿԱՆ ԶՐԵՐԻ, ինչպէս օրինակ՝ Վիլի, Լիմի, Կարկառի, Մարիէնայի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների տուած կանոններին: Արտաստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հաշուաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի գեղազանցութիւններ. նրանք կարող են միւտ թարմ դրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ածխածին զաղերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախորժելի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա:

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել զէպի գործն ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:

Տարածայնութիւններից խոտակերտ համար, խնայարար ինչպէս եմ իմ ջրերի գործածողներին պահանջել որ իմ բոլոր արիւնքները կրեն իմ ֆիլմայի նշանակը, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ 33—50 (Ե)

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Г. Арпруня, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amiranjanjanz. Preis 20 kor.

Иногородные, желающие получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру. Адресъ. Тифлисъ, Редакція „Мшахъ“, или Tiflis, Redaction „Mschak“.

(Ե)

---

Մարմին մասերը, մանաւանդ ոտների մասերը փակուց պահպանող փուշի

### ԳԱԼՄԱՆԻՆ

Ժախվում է զեղաւորներում և դրօշակներին մօտ եւրօպայի նշանաւոր քաղաքներում և կայսրութեան բոլոր քաղաքներում: ԳԼԽԱՐՈՐ ՊԱՀԵՍ Գտնվում է ՎԱՐՇԱՎԱՑՈՒՄ, հնարողի, զեղաւոր տիրոջ, ֆարմացիայի մաքրար Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻՆ մօտ, Էլեկտրոսիայ փողոց, № 39. Գալմանի մեծ արկղը արժէ վարչապետ 50 կ., փոքրը 30 կոպ.

ՊԵՏԻ Ե ԶԳՈՒՇԱԿԱԿ ԿԵՂՏՈՒՄՆԵՐԻՑ

և պահանջել, որ իւրաքանչիւր արկղը կրէ փոշու գործածութեան բացատրութիւնը և փարիզի ցուցահանդիսի մեղաւորները:

10—10 (Ե)

Societa Generale italiana di Navigazione.

117 ԱՌԱՋԵԱԿԱՐԳ ՄԵԾ ՇՈՒՆԱԿԻՐ ՈՒՆԵՑՈՂ

### ԻՏԱԼԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԿԻՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Կանոնաւոր երթեւեկութիւն Բաթումի և Եւրօպայի, Աֆրիկայի, Ասիայի ու Ամերիկայի բոլոր գլխաւոր նաւահանգիստների մէջ: Զոգնաւորը Բաթումից դուրս են դալիս կանոնաւորապէս ամեն շաբաթ:

1500 տոննա ունեցող շոգնաւորը Բաթումից դուրս են դալիս ամեն երեքշաբթի օր դէպի Անատոլիայի բոլոր զծերը և Կ. Պոլիս:

Բոլոր տեղեկութիւնների մասին (թէ ճանապարհորդները և թէ ապրանքների մասին) դիմել ընկերութեան գործակալ Ի. Է. ԶԻՐՈՒՍԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ—Գոյովինսկի պրօսպ. № 34 և ԲԱԹՈՒՄՈՒՄ—Իլիւ. Գուրիէլի տանը:

21—40